

Ա. Շ. ԲՈՋՈՑԱՆ


ՄԻ ՔԱՆԻ ԾԱՌԱՔՓԵՐԻ ՊԻՏԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ԿԵՆԴԱՆԻ ՑԱՆԿԱՊԱՏԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(Հաղորդագրություն 2)

Տվյալ աշխատությունը նպատակ ունի լրացնելու նախկինում մեր կողմից տրված տեղական դենդրոլոգիական ասորտիմենտի բնութագիրը, ըստ ճյուղավորության առանձնահատկությունների և պիտանիությանը կենդանի ցանկապատերի կառուցման համար (Բուս. այգու Բյուլետեն, № 17, 1959):

Սերկևիլենի ճապոնական—*Chaenomeles japonica* (Thunb.) Lindl. Հայրենիքը Ճապոնիան է: Թուփ է, 2—3 մետր բարձրությամբ: Ջերմասեր է, չորադիմացկուն, հողի նկատմամբ քիչ պահանջկոտ: Կարող է աճել քարքարոտ, սննդանյութերով աղքատ հողերում: Ծրեկանում առատ ծաղկում է ապրիլի երկրորդ կեսին, ծաղիկները վառ-կարմրավուն են: Պտուղները հասունանում են հոկտեմբերին: Քանի որ այս տեսակը վերատնկման դեպքում դանդաղ է աճում, ապա եղբարշերտ (բորդյուր) ստեղծելու դեպքում սովորաբար առաջին տարում խուզման չեն ենթարկվում, այլ խուզում են երրորդ տարում: Այդ ժամանակաշրջանում արմատավզիկից և նրա շրջակա արմատներից առաջանում են 2—3 կմախքային շվեր: Հետագա տարիներում նոր առաջացող կմախքային շվերը սակավ են: Արմատից և արմատավզից առաջացած ճյուղերը արագ են աճում և խուզման առաջին տարում չեն ճյուղավորվում: Հետագա տարիներին խուզումների ընթացքում յուրաքանչյուր ճյուղի կտրվածքի ներքևից առաջանում են 2 նոր ճյուղեր, իսկ երբ ճյուղավորման աստիճանը հասնում է իր մաքսիմումին, ապա ճյուղավորման գոտին հավասարապես բաշխվում է բորդյուրի ամբողջ մակերեսով և աստիճանաբար պակասում է նրա ճյուղավորման ունակությունը (այսինքն մեկ ճյուղի վրա առաջանում է 1—2 շվից ոչ ավելի): Այստեղ կարևորն այն է, որ բորդյուր կազմող բոլոր ճյուղերը հիմքից մինչև զագաթը տերեակալում են, դրանով իսկ նպաստավոր պայմաններ ստեղծում առատ ճյուղավորման և կենսունակության պահպանման համար: Մեր պայմաններում ճապոնական սերկևիլենուց ստեղծած բորդյուրը հինգ տարեկան հասակում սովորաբար ունենում է 65 սմ բարձրություն և 60 սմ լայնություն: Վեգետացիայի ընթացքում խորհուրդ է տրվում բորդյուրը խուզել 3 անգամ, ընդ որում առաջինը լրիվ ծաղկաթափից հետո՝ մայիսի երկրորդ կեսերին, իսկ վերջինը՝ օգոստոսի սկզբին: Չպիտք է մոռանալ, որ վաղ գարնանը և ուշ աշնանը խուզելու դեպքում 3—4-րդ կարգի ճյուղերը ցրտահարվում են: Դիտողությունները ցույց են տվել, (աղյուսակ 1) որ խուզման երկրորդ տարում 1 գծմ բորդյուրի վրա առաջանում են 540, իսկ երրորդ տարում՝ 700 ճյուղեր: Այդ ժամանակամիջոցում կմախքային ճյուղերի թիվը 25-ից հասնում է 32-ի, իսկ ճյուղավորման կարգը այդ ճյուղերի վրա հասնում է 3—4-ի: Իր այդ հատկություններով ճապոնական սերկևիլենին ավելի մոտենում է կիսաթփերին:

Ճապոնական սերկևիլենուց կառուցված բորդյուրի խուլման դեպքում ճյուղերի շորացում, ցրտահարում, տերևների այրվածք և հիվանդություններով ու վնասատուներով վարակվածության դեպքեր չեն նկատվել: Բորդյուրը դեկտրատիվ բարձր արժեք ունի, գարնանը ծաղիկների առատությամբ, իսկ աշնանը՝ տերևների գեղեցիկ գունավորման շնորհիվ (նկ. 1):




Նկ. 1. Պուղված ցանկապատ ճապոնական սերկևիլենուց

Ճապկի բնձյուղավոր—*Cornus stolonifera* Michx. Հայրենիքը Հյուսիսային Ամերիկան է: Մինչև 2,5—3 մ բարձրության և 1,5—2 մ լայնության սաղարթով: Բավականին խոնավասեր, է և ստվերատար, Երևանի բուսաբանական այգու պայմաններում հաջողությամբ աճում է նաև բաց, լուսավոր վայրերում: Պահանջկոտ է հողի նկատմամբ: Դիմանում է ամենախիստ սառնամանիքներին: Ծաղկում է մայիսին, ծաղիկները դեղնա-սպիտակ են: Պտուղները հասունանում են հուլիսին, վերատնկման լավ է դիմանում: Խուլման առաջին և երկրորդ տարիներում կմախքային նոր ճյուղեր համարյա չեն առաջանում: Խուլման երրորդ տարում արմատավզիկից և նրանից 5—7 սմ վերև առաջանում են 1—2 ուժեղ աճ ունեցող կմախքային շվեր, որոնք լիսնված բույսերի համեմատությամբ տալիս են 1,5 անգամ ավելի մեծ մակերեսով տերևներ: Երբ բորդյուրը խտանում է, նոր կմախքային ճյուղերի առաջացումը դադարում է: Այդ ժամանակ ճյուղերի վրա առաջացող նոր տերևների մակերեսները փոքրանում են: Որքան մեծանում է բորդյուրը, այնքան նրա տերևակալման զոնան բարձրանում է բորդյուրի մակերեսով վեր: Շառավիղավոր ճապկենուց ստեղծված բորդյուրը տնկման շրջանում արդեն լիարժեք է ձևավորման համար, քանի որ ունենում է 60 սմ-ից ավելի բարձրություն և 50 սմ լայնություն:

Ինչպես պարզորոշ երևում է ստորև բերված № 1 աղյուսակից 1 գծմ բորդյուրի վրա խուլման երրորդ տարում առաջանում են 480, իսկ չորրորդ տարում՝ 900 ճյուղ: Այդ ժամանակամիջոցում կմախքային ճյուղերի թիվը 15-ից

հասնում է մինչև 33-ի և նրանց վրա առաջանում են երրորդ-չորրորդ կարգի բաղ-մաթիվ ճյուղավորություններ: Իր այդ հատկությունների շնորհիվ այս տե-սակը մոտ է տիպիկ թփերին: Շառավիղավոր ճապկենու բորդյուրը խորհուրդ է տրվում խուզել երեք անգամ՝ ընդ որում առաջինը մայիսի երկրորդ կեսին ծաղկման ժամանակ, իսկ վերջինը՝ օգոստոսի երկրորդ կեսին: Ճապկու բոր-դյուրը դեկտրատիվ է տարվա բոլոր եղանակներին, անգամ տերևաթափից հետո, քանի որ ճյուղերն աչքի են ընկնում մուգ կարմիր գույնով:

Շառավիղավոր ճապկու խուզած բորդյուրը ձմեռադիմացկուն է, քամի-ներից և օդի շորությունից, ինչպես նաև հիվանդություններից ու վնասատունե-րից չի վնասվում (նկ. 2):



Նկ. 2. Խուզված ցանկապատ ընձյուղավոր ճապկուց

ձապկի արևակարմիր—*Cornus sanguinea* L. Այս տեսակը իր բոլոր հատ-կություններով նման է նախորդին, միայն այն տարբերությամբ, որ առաջա-ցում է ավելի գեղեցիկ, ցածր և ավելի հաճախ խուզման ենթակա բորդյուր:

Դրախտածառ—*Cotinus coggygria* Scop. Տարածված է հյուսիսային Հայաս-տանի անտառներում: Զերմասեր և չորադիմացկուն է: Լավ է աճում ջրաթա-փանց, քարքարոտ հողերում: Բարձրությունը նորմալ պայմաններում հասնում է 5—6, իսկ սաղարթի լայնությունը՝ 2—3 մետրի: Երևանի պայմաններում ծաղկում է հունիսի երկրորդ կեսին: Պտուղները հասունանում են օգոստոսին: Դրախտածառը վատ է դիմանում վերատնկման, որի հետևանքով 1—2 տարի թույլ է աճում, երբեմն հիվանդանում է, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ չորա-նում է: Խուզելիս արմատներից կամ արմատավզիկից նոր շվեր առաջացնելու հատկություն չունի: Պսակը խտանում է 3—4-րդ կարգի ճյուղերով: Ցուրա-քանչյուր ճյուղի կտրվածքի ներքևից առաջանում է 2—3 նոր ընձյուղ: Բոր-դյուրի 1 գծմ վրա խուզման երրորդ տարում առաջանում է մինչև 248 ճյուղ, իսկ չորրորդ տարում՝ 540: Այդ ժամանակամիջոցում կմախքային ճյուղերի

քանակը մնում է անփոփոխ (15): Այս հատկանիշով դրախտածառը մոտենում է ծառատեսակներին:

Դրախտածառի 5 տարվա բորդյուրը սովորաբար ունենում է 80 սմ բարձրություն և 40 սմ լայնություն: Վեգետացիայի ընթացքում խորհուրդ է տրվում խուզել 2 անգամ, առաջին անգամը ծաղկելուց հետո, իսկ վերջինը՝ օգոստոսի սկզբին: Վաղ գարնանը և ուշ աշնանը խուզել չի կարելի, բանի որ կտրած տեղից 5—6 սմ ներքև ճյուղը շորանում է, խիստ տգեղացնելով կենդանի ցանկապատը: Խուզված բորդյուրը սառնամանիքներից, քամիներից և ձյունից չի տուժում, չի վարակվում նաև վնասատուներով և հիվանդություններով: Դեկտրատիվ է ամբողջ վեգետացիայի ընթացքում, և հատկապես աշնանը, երբ տերևները ստանում են կարմիր գույն:


Բոնչի սովորական—*Viburnum opulus* L. Տարածված է Հայաստանի անտառներում: Թուփ է մինչև 2—4 մ բարձրության և 1—1,5 մետր լայնության պսակով: Աչքի է ընկնում ցրտադիմացկանությամբ, սովորատարությամբ և խոնավասիրությամբ: Հողի նկատմամբ պահանջկոտ է, լավ է դիմանում վերատրեկմանը: Խուզման երկրորդ տարում արմատներից և բնբրի ստորին մասից առաջանում են 2—3, իսկ չորրորդ տարում 3—4 կմախքային արագ աճող ճյուղեր: Հետագայում բորդյուրը խտանում է 3-րդ, 4-րդ կարգի ճյուղերի հաշվին: Խուզման չորրորդ տարում ձևավորման համար լիարժեք է: Բարձրությունը հասնում է 60 սմ, իսկ լայնությունը 50 սմ-ի: Բորդյուրի 1 գծմ վրա խուզման երրորդ տարում առաջանում է մինչև 540, իսկ չորրորդ տարում 1200 ճյուղ: Այդ ժամանակամիջոցում կմախքային ճյուղերի թիվը 16—18-ից չի փոփոխվում, ընդ որում ճյուղավորման մաքսիմումը հասնում է մինչև 4-րդ կարգի: Իր այդ հատկություններով բոնչին տիպիկ թուփ է:

Փորձերը ցույց են տվել, որ սովորական բոնչուց հիմնադրված բորդյուրը վեգետացիայի ընթացքում նպատակահարմար է խուզել 2—3 անգամ, առաջին անգամ ծաղկման ժամանակ, իսկ վերջինը՝ սեպտեմբերի երկրորդ կեսին: Կարելի է խուզել նաև վաղ գարնանը և ուշ աշնանը: Արմատային մացառներ չի առաջացնում: Բոնչու բորդյուրը խիտ է, հիմքից մինչև գագաթը լավ տերևավակալում է: Կտրած ճյուղերի վրա տերևների մակերեսները փոքրանում են, ավելի գեղեցիկ տեսք տալով բորդյուրին: Սաղարթը գարնանը ունենում է բաց կանաչ գույն:

Սովորական բոնչին Երևանի պայմաններում ծաղկում է մայիսի վերջերին: Մողիկները սպիտակ են: Պտուղները հասունանում են սեպտեմբերի վերջերին և թփի վրա մնում են մինչև գարուն—նոր բողբոջների բացվելը: Չի ցրտահարվում նույնիսկ ամենախիստ սառնամանիքների դեպքում: Չի վարակվում վնասատուներով և հիվանդություններով (նկ. 3):

Գիհի վիրգինյան—*Juniperus virginiana* L. Տարածված է Հյուսիսային Ամերիկայի արևելյան շրջաններում: Երևանի պայմաններում չորադիմացկուն, լուսասեր, մշտադալար ծառ է, որի բարձրությունը հասնում է 4—5 մետրի: Լրիվ ցրտադիմացկուն է: Լավ է տանում վերատնկումը հողազնդով: Վերատնկման առաջին տարում խորհուրդ է տրվում կատարել մեկ խուզում՝ այն էլ ոչ խորը: Հետագա տարիներում պետք է խուզել 2—3 անգամ, առաջին անգամ մայիսի երկրորդ կեսին, իսկ վերջինը՝ օգոստոսի երրորդ տասնօրյակում: Խուզման դեպքում արմատներից և արմատավզիկից նոր կմախքային ճյուղեր առաջաց-

նեկու հատկությունն չունի: Կմախքային ճյուղերի քանակը մնում է անփոփոխ: Իր այդ հատկություններով գիհին մոտ է ծառատեսակներին: Վերգինյան դիհու բորդյուրը սովորաբար խտանում է 3—4-րդ կարգի ճյուղերով: Խուզման 2-րդ տարում բորդյուրի մեկ գծամետրի վրա առաջանում է մինչև 680, իսկ երրորդ տարում՝ 942 ճյուղ: Հիմնադրման չորրորդ տարում ունենում է 70 սմ բարձրություն և 60 սմ լայնություն: Դեկորատիվ է տարվա բոլոր եղանակներին և հատկապես ձմռանը: Խուզումից հետո առաջացած ասեղնատերևները ավելի մանր են լինում և ցանկապատին տալիս են մուգ կանաչ գունավորում: Վնա-



Նկ. 3. Խուզված ցանկապատ սովորական բռնչուց

սատուններից և հիվանդություններից չի վնասվում, ամառվա շոգից տերևների այրվածք, գազաթային ճյուղերի չորացում չի նկատվում: Վաղ գարնանը խուզելիս կտրված ճյուղերից առաջանում է խեժ, որը մասամբ տզեղացնում է ցանկապատը:

Արևելյան կենսածառ քրզաձև—*Biota orientalis* Endl. f. *pyramidalis* hort. Վայրի վիճակում աճում է Հյուսիսային Չինաստանում: ՍՍՏՄ-ում լայն տարածված է բնակավայրերի կանաչապատման պրակտիկայում: Ջերմասեր, լուսասեր, չորադիմացկուն, մշտադալար թուփ է: Լավ է աճում անգամ քարքարոտ, աղքատ հողերում:

Երևանի պայմաններում սովորաբար հասնում է 3,3—5 մ բարձրության և 1,5—2 մ լայնության, լավ է դիմանում վերատնկմանը, որն անպայման պետք է կատարել հողազնդով, երբ բույսերը 4—5 և ավելի տարեկան են: Արևելյան կենսածառի այս պարտեզային ձևը դանդաղ է աճում, որի հետևանքով նրանից կազմված բորդյուրը առաջին երկու տարում կողքերից խուզման կարիք չի զգում: Մինչ այդ խորհուրդ է տրվում խուզել միայն վերևից: Արմատաշվեր առաջացնելու ընդունակություն չունի: Կմախքային նոր շվերը սովորաբար առաջանում են խիստ զովարությունամբ, դանդաղ, միայն արմատավզիկից և նրանից 1—2 սմ վերև, խուզման 4—5-րդ տարիներում: Բորդյուրը խտանում է

3—4-րդ կարգի մանր ճյուղերի հաշվին: Այնուհետև խտանում է բորդյուրի վերերկրյա մասը, որի ընթացքում տերևակալման զոնան սկսում է բարձրանալ դեպի նրա արտաքին մակերեսը: Քանի որ լույսը բորդյուրի կենտրոնական մասը վատ է թափանցում, այնտեղ տերևաթափ է լինում: Նման բորդյուրը 5 տարեկան հասակում միանգամայն լիարժեք է և ունենում է 60 սմ բարձրություն և 50 սմ լայնություն:

Արևելյան կենսածառից ստեղծված բորդյուրի 1 գծմ վրա խուզման շոր-բորդ տարում սովորաբար առաջանում է 890, իսկ 5-րդ տարում՝ 1346 ճյուղ: Այդ ժամանակամիջոցում կմախքային ճյուղերի թիվը 6-ից հասնում է 12-ի: Իր այդ հատկություններով կենսածառը մոտ է թփերին: Կենսածառի բորդյուրը դեկորատիվ է տարվա բոլոր եղանակներին և հատկապես ձմռանը՝ շնորհիվ մշտադալարության: Կարելի է խուզել տարեկան 2 անգամ, առաջին խուզը խորհուրդ է տրվում կատարել մայիսի սկզբներին, իսկ երկրորդը՝ օգոստոսին: Ուշ աշնանը խուզելու դեպքում փշատերևները քամիներից դեղնում են: Դիմացկուն է հիվանդությունների և վնասատուների նկատմամբ:

Կենսածառ արևելյան—*Biota orientalis* Endl. Այս տեսակը իր բոլոր հատկություններով նման է նախորդին, միայն այն տարբերությամբ, որ ավելի նոսր պսակ ունի և սրանից ստացված բորդյուրը ավելի բարձր և ցանցառ է լինում: 4 տարեկան բորդյուրը սովորաբար ունենում է 80 սմ բարձրություն և 60 սմ լայնություն:


Կիպրոս սովորական—*Ligustrum vulgare* L. Տարածված է Հայաստանի անտառներում: Երևանի պայմաններում հասնում է 2—2,5 մ բարձրության: Չորադիմացկուն, ջերմասեր և լուսասեր է, սակայն կարող է աճել նաև կիսաստվերում: Հողի նկատմամբ պահանջկոտ է, հատկապես լավ է աճում սննդանյութերով հարուստ հողերում: Կրով հարուստ կարբոնատային հողերում սովորաբար տուժում է քլորոզից: Ծաղկում է հունիսի սկզբներին, սպիտակ, հոտավետ ծաղիկներով: Պտուղները հասունանում են հոկտեմբերին:

Սովորական կիպրոսը վերատնկման լավ է դիմանում: Խուզման առաջին տարում արմատավզից տալիս է 1—2, երկրորդ տարում՝ 2—3 կմախքային ճյուղեր: Կմախքային ճյուղերը ավելանում են միայն մինչև խուզման 4-րդ—5-րդ տարին: Բորդյուրը խտանում է 3-րդ—4-րդ կարգի բարակ ճյուղերով: Ճյուղավորման զոնան բարձրանում է բորդյուրի արտաքին մակերեսը, տերևները փոքրանում և ավելի փայլուն են դառնում:

Ինչպես ցույց են տալիս 1 աղյուսակի տվյալները, կիպրոսի 1 գծամետր բորդյուրի վրա խուզման 4-րդ տարում առաջանում է 1480, իսկ խուզման 5-րդ տարում՝ 1680 ճյուղ: Այդ ժամանակամիջոցում փոփոխվում է կմախքային ճյուղերի թիվը՝ (28—38) առաջացնելով 3—4-րդ կարգի ճյուղավորություն: Սա ցույց է տալիս, որ սովորական կիպրոսը խուզման դեպքում իր հատկություններով մոտենում է կիսաթփերին: Այս տեսակից ստեղծած 5 տարեկան բորդյուրը ունենում է 70 սմ բարձրություն և 60 սմ լայնություն: Վեգետացիայի ընթացքում խորհուրդ է տրվում խուզել 2—3 անգամ, առաջին խուզումը պետք է կատարել ապրիլի սկզբներին, իսկ վերջինը՝ սեպտեմբերին: Կարելի է խուզել նաև ուշ աշնանը և վաղ գարնանը: Խուզման պատճառով բորդյուրը չի ծաղկում: Դեկորատիվ է ամբողջ տարվա ընթացքում: Պաշտպանված վայրերում ձմռանը համարյա տերևաթափ չի լինում, հիվանդություններով և վնասատուներով չի վարակվում (նկ. 4):

Կիպրոս սովորական կանաչալուռուղ—*Ligustrum vulgare* L. v. *chlorocarpum* Loud. Այս տեսակը իր ճյուղավորման հատկություններով նման է նախորդին այն տարբերությամբ, որ ավելի պահանջկոտ է հողի նկատմամբ: Լավ է աճում հզոր, սննդանյութերով հարուստ հողերում: Կրային հողերում սովորաբար 2—3 տարուց հետո հիվանդանում է բլրորդով և չորանում:

Բորդյուրը աչքի է ընկնում բաց կանաչավուն գույնով և շատ ավելի նուրբ ու գեղեցիկ է: 4 տարեկան ցանկապատը ունենում է 60 սմ բարձրություն, 40 սմ լայնություն և ձևավորման համար միանգամայն պիտանի է:



Նկ. 4. խուղված ցանկապատ սովորական կիպրոսլոց

Տխլենի—*Corylus avellana* L. Վայրի վիճակում աճում է հյուսիսային Հայաստանի անտառներում: Ստվերատար, ջերմասեր, խոնավասեր թուփ է, մինչև 5 մետր բարձրությամբ: Պահանջկոտ է հողի նկատմամբ, լավ է աճում հատկապես հզոր սևահողերում և հեշտությամբ է տանում վերատնկումը: Սաղարթը խտանում է արմատներից առաջացող շվերի հաշվին, որոնք նույն տարում ճյուղավորվելու հատկություն չունեն: 1 գծմ ցանկապատի վրա տրնկման երրորդ տարում առաջանում է 210, իսկ 4-րդ տարում՝ 240 ճյուղ: Այդ ժամանակամիջոցում փոփոխվում է նաև կմախքային ճյուղերի թիվը, 15-ից հասնելով 20-ի: Վաղ գարնանը անհրաժեշտ է լինում մաքրել բորդյուրը ցրտահարված և չորացած ճյուղերից: Տխլենուց կառուցված բորդյուրը կարելի է խուզել 2 անգամ, խուզումը պետք է կատարել այնպես, որ հավասարեցվի սաղարթի վերին մասը: Յուրաքանչյուր չոր կմախքային շիվը հիմքից մինչև գագաթը խիտ տերևակալվում է: Ցանկապատը խիտ է ստացվում շնորհիվ հողաշվերի վրա առաջացած մեծ մակերես ունեցող տերևների: Բաց տեղերում խուղված բորդյուրի տերևները արեահարվում են, որից բորդյուրը տգեղանում է:


Հաղարջենի ոսկեգույն—*Ribes aureum* Pursh. Հայրենիքը—Հյուսիսային Ամերիկա: Խոնավասեր և ցրտադիմացկուն թուփ է, 2,5 մ բարձրության և 1,5 մ

լայնությունը պսակով: Հողի նկատմամբ պահանջկոտ չէ, լավ է աճում նույնիսկ քարքարոտ, աղքատ հողերում: Երևանի պայմաններում ծաղկում է մայիսի առաջին կեսերին: Պտուղները հասունանում են հուլիսի սկզբներին: Վերատրնկմանը լավ է դիմանում: Խուզման առաջին տարում արմատներից, արմատավզիկից առաջանում են 3—4 կմախքային ճյուղեր, որոնք աչքի են ընկնում արագ աճով: 3-րդ, 4-րդ տարին կմախքային ճյուղերի թիվը ավելանում է, որից հետո ցանկապատը, երբ խտանում է ճյուղավորման կարգը հասնում է իր մաքսիմումին (4-րդ կարգ): Տնկման 4-րդ տարում հաղարջենու բորդյուրի 1 գծմ վրա առաջանում է շուրջ 680 ճյուղ, իսկ 4-րդ տարում՝ 1240 ճյուղ: Այդ ժամանակամիջոցում կմախքային ճյուղերի թիվը 15-ից հասնում է 32-ի: Իր այդ հատկություններով արծաթափայլ հաղարջենին մոտ է կիսաթփերին: Հաղարջենու այս տեսակից կազմված բորդյուրը տնկման 4-րդ տարում հասնում է 70 սմ բարձրության և 50 սմ լայնության: Բորդյուրը վեգետացիայի ընթացքում խուզվում է 2 անգամ, առաջին անգամ ապրիլի առաջին կեսին, իսկ երկրորդը՝ սեպտեմբերի վերջերին: Կարելի է խուզել նաև ուշ աշնանը և վաղ գարնանը:


Զկեռ—*Mespilus germanica* L. Տարածված է հյուսիսային Հայաստանի անտառներում: Մինչև 3—6 մ բարձրության և 1,5—2 մ պսակի տրամագծով թուփ է: Խոնավասեր է, ջերմասեր: Պահանջկոտ է հողի նկատմամբ, լավ է աճում հատկապես սննդանյութերով հարուստ, հզոր հողերում: Երևանի պայմաններում չի ցրտահարվում: Վերատնկումը լավ է տանում: Խուզելու դեպքում արմատներից և արմատավզիկից շվեր չի առաջացնում: Սաղարթը խտանում է 3-րդ, 4-րդ կարգի ճյուղերով, որոնք առաջանում են կտրված տեղից անմիջապես ներքև:

Զկեռից կարելի է ստեղծել խիտ և բարձր բորդյուր: Սովորաբար 5 տարեկան բորդյուրը ունենում է 75 սմ բարձրություն և 60 սմ լայնություն և անանցանելի է դառնում իր խտության և փշերի պատճառով: 1 գծմ ցանկապատի վրա խուզման 3-րդ տարում առաջանում են 468 ճյուղ, իսկ 4-րդ տարում՝ 720 ճյուղ: Կմախքային ճյուղերը զարգանում են արմատավզիկից 10—15 սմ բարձր և ունենում են մինչև 4—5 կարգի ճյուղավորություն: Իր այս հատկություններով մոտ է ծառատեսակներին: Վեգետացիայի ընթացքում զկեռից կազմված բորդյուրը պետք է խուզել 2 անգամ, առաջին անգամ մայիսի սկզբին, իսկ երկրորդը՝ օգոստոսի վերջերին: Վաղ գարնանը և ուշ աշնանը խուզել չի կարելի, որովհետև կտրված շվերի ծայրերը չորանում են: Զկեռենուց կազմված բորդյուրը չի ցրտահարվում, քամիներից, ձյունից և վնասատուներից չի տուժում: Դեկտրատիվ է հատկապես գարնանը և աշնանը՝ տերևների գեղեցիկ գունավորման ժամանակ (նկ. 5):

Թխկի սպիտակ—*Acer pseudoplatanus* L. Տարածված է Կովկասում և Եվրոպայում: Մինչև 20—25 մ բարձրության ծառ է: Պահանջկոտ է օդի խոնավության նկատմամբ, Երևանի պայմաններում ծառի բունը ճաքճքվում է և ձմռանը խիստ ցրտերի դեպքում ոչնչանում է: Լավ է տանում վերատնկումը: Խուզելու դեպքում արմատներից և արմատավզիկից շվեր չեն առաջանում: Պսակը խտանում է 4-րդ, 5-րդ կարգի ճյուղերի հաշվին, որոնք առաջանում են կտրվածքի անմիջապես ներքևից: Խուզման երրորդ տարում 1 գծմ ցանկապատի վրա առաջանում է մոտ 268, իսկ 4-րդ տարում՝ 428 ճյուղ: Այդ ժամանակամիջոցում կմախքային ճյուղերի թիվը մնում է անփոփոխ (նկ. 6): Ծյուղերը զարգանում են արմատավզիկից 5—6 սմ բարձր և առաջանում են մինչև 4, 5 կարգի



Նկ. 5. Ոռգված ցանկապատ զկեռենուց



Նկ. 6. Ոռգված ցանկապատ սպլտակ թխկենուց

Ճյուղավորումներ: Սպիտակ թխկին ճյուղավորման այդ հատկություններով մոտ է ծառատեսակներին: Սպիտակ թխկուց կազմած բորդյուրը 5 տարեկան հասակում ունենում է 80 սմ բարձրություն և 60 սմ լայնություն: Վեգետացիայի ընթացքում բորդյուրը կարելի է խուզել 2 անգամ. առաջինը՝ մայիսին, իսկ վերջինը՝ օգոստոսի երկրորդ կեսին: Վաղ գարնանը կամ ուշ աշնանը չի կարելի խուզել, քանի որ կտրած շվերի ծայրերը և հատկապես նվազ շվերը աշնանը կտրելու հետևանքով ձմռանը ցրտից վնասվում են:

Բորդյուրը ներքևից ճյուղավորվելու շնորհիվ բույսերի բները պաշտպանվում են ճաքճքելուց և ձմռան ցրտահարություններից: Խուզման հետևանքով չի ծաղկում, դեկորատիվ է վաղ գարնանը և ուշ աշնանը տերևների գեղեցիկ գունավորման շնորհիվ:

Սպիտակ թխկուց ստացվում է նոսր, բարձր, շատ գեղեցիկ բորդյուր (նկ. 6):

Աղյուսակ I

Մի քանի Թփատեսակներից կառուցված կենդանի ցանկապատերի ցուցանիշները

Երևանի բուսաբանական այգու պայմաններում

Показатели живых изгородей, устроенных из некоторых древесно-кустарниковых пород в условиях Ереванского ботанического сада

Ռուսի անունը Названия растения	Տարիներ Г о д ы	Խուզման քանակը Количество стрижек	1-ին կարգի ճյուղերի թիվը ցանկապատի 1 գծով վրա Кол-во ветвей 1-го порядка на 1 лин. метр изгороди	Ճյուղերի ընդհանուր թիվը ցանկապատի 1 գծով վրա Общее кол-во ветвей на 1 лин. метр изгороди	Ճյուղավորման կարգի մաքրմանը Высший порядок ветвления у нестриженных растений	Ճյուղավորման կարգի մաքրմանը Խուզման գեղարվեստ То же при стрижке	Գանկապատի բարձրությունը (սմ) Высота живой изгороди (см)	Գանկապատի լայնությունը (սմ) Ширина живой изгороди (см)
1	2	3	4	5	6	7	8	9
Սերկեկինի ճապոնական Chaenomeles japonica (Thunb.) Lindl.	1957 0 1958 0 1959 0 1960 2 1961 3 1962 3	0 0 0 2 3 3	10 10 10 15 25 32	24 50 150 240 540 700	II—III	III—IV	20 25 30 45 55 65	0 10 20 35 45 60
Ճապկի ընձյուղավոր Cornus stolonifera Michx.	1957 0 1958 2 1959 2 1960 3 1961 3 1962 3	0 2 2 3 3 3	10 10 15 33 33 33	40 184 296 480 900 1200	II—III	III—IV	10 15 20 38 50 60	0 10 15 30 40 50
Ճապկի արնակարմիր Cornus sanguinea L.	1957 0 1958 1 1959 2 1960 2 1961 3 1962 3	0 1 2 2 3 3	12 14 16 32 32 33	26 56 246 642 786 982	II—III	III—IV	10 20 25 40 50 60	0 5 10 20 35 50
Դրախտածառ Cotinus coggygia Scop.	1957 0 1958 0 1959 1 1960 1 1961 2 1962 2	0 0 1 1 2 2	12 12 14 15 15 15	24 38 109 200 248 540	III—IV	IV—V	20 25 30 60 75 80	0 0 10 20 30 40

1	2	3	4	5	6	7	8	9
Բունչի սովորական <i>Viburnum orulus</i> L.	1957	1	12	28			10	0
	1958	2	14	76		III—IV	20	10
	1959	2	16	380	III		35	25
	1960	3	18	540			50	40
	1961	3	19	1200			60	50
	1962	3	19	1300			60	55
Գինի վերդինյան <i>Juniperus virgi niana</i> L.	1958	0	3	124			30	0
	1959	1	3	248	III—IV	IV—V	35	10
	1960	2	3	462			50	40
	1961	3	3	680	III—IV		60	50
	1962	3	3	942			70	60
Կենածառ արևելյան բրդաձև <i>Biota orientalis</i> Endl.	1957	1	5	82			10	0
	1958	1	5	136			20	10
	1959	1	5	294			30	20
<i>f. pyramidalis</i> hort.	1960	2	6	624	III	IV	45	30
	1961	2	6	890			50	40
	1962	2	6	1346			60	50
Կենածառ արևելյան <i>Biota orientalis</i> Endl.	1957	0	4	12			45	20
	1958	1	4	38			55	35
	1959	2	5	118			65	45
	1960	2	7	294	III	IV	70	50
	1961	2	7	368			80	70
	1962	2	7	425			90	80
Կիպրոս սովորական <i>Ligustrum vulgare</i> L.	1957	1	10	28			20	10
	1958	2	20	248			25	20
	1959	2	25	680			40	30
	1960	3	25	969	III	IV	50	45
	1961	3	28	1480			60	50
	1962	3	38	1680			70	60
Կիպրոս կանաչապտուղ սովորական <i>Ligustrum vulgare</i> <i>var. chlorocarpum</i> Loud.	1957	1	12	24			20	10
	1958	2	18	129			25	10
	1959	2	23	669			30	40
	1960	3	28	894	III	IV	50	45
	1961	3	36	1240			55	50
	1962	3	38	1680			60	50
Տխլենի <i>Corylus avellana</i> L.	1957	0	5	20			40	20
	1958	1	10	80			50	20
	1959	1	15	120	III	III	50	25
	1960	2	20	180	II—III	II—III	60	30
	1961	2	20	210			65	50
	1962	2	20	240			70	60
Հաղարջենի ոսկեգույն <i>Ribes aureum</i> Purch.	1957	1	12	24			20	10
	1958	2	12	240			25	15
	1959	2	14	462			35	20
	1960	2	15	526	III	IV	40	30
	1961	2	15	680			50	40
	1962	2	32	1240			70	50
Ջկեն <i>Mespilus germanica</i> L.	1957	1	12	24			20	10
	1958	2	12	82			30	20
	1959	2	14	124	III—IV	IV—V	40	30
	1960	2	15	278			50	40
	1961	3	15	468	III	IV	60	50
	1962	3	32	720			70	50
Թխկի սպիտակ <i>Acer pseudoplatanus</i> L.	1957	1	5	20			25	0
	1958	1	5	48			30	10
	1959	1	5	120	III—IV	IV—V	40	30
	1960	2	5	148			50	40
	1961	2	5	268	III	IV	60	50
	1962	2	5	428			80	60

А. А. БОЗОЯН

Пригодность некоторых деревьев и кустарников для устройства живых изгородей в условиях Еревана

Резюме

С 1953 г. в Ереванском ботаническом саду на специальном участке испытываются 28 видов деревьев и кустарников с точки зрения пригодности их для устройства стриженных живых изгородей. В предыдущем сообщении (Бюллетень Бот. сада АН АрмССР, № 17, 1959) давалась характеристика 15 видов, в настоящем—12. Основное внимание обращалось на характер и интенсивность ветвления, связанные с принадлежностью вида к той или иной жизненной форме (полукустарник, кустарник, деревцо, дерево). Все испытанные породы в той или иной степени пригодны для стриженных бордюров.

В характеристике каждого вида приводятся сведения об устойчивости к неблагоприятным факторам среды, о типе ветвления, способности цвести в условиях регулярной стрижки, необходимом числе и сроке стрижек за вегетационный сезон и пр.

Наилучшие живые изгороди дают айва японская, свидина кроваво-красная, биота восточная, бирючина обыкновенная, калина, можжевельник виргинский.